


Թիւնների, ազանգների, ընկերութիւնների վերայ բաժանուած լինելով հանդերձ՝ համեմատարար շատ քիչ առիթ է տալիս կրօնական վեճերի և հակառակութեանց. ամէն մէկը գնում է իւր առաջ դժած ճանապարհով առանց միւսներին խանգարել ջանալու և ընդհակառակն՝ հարկաւոր դէպքում միանալով ընդհանուր թշնամու. օր աւուր արձող անհաւատութեան և անբարոյականութեան դէմ:

Կ. Վ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՄԱԿԱՆ

Ս. ԷԶՄԻԱՅԻՆԸ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐԻ ՏԱՂԵՐՈՒՄ.

Ա.

Սերացականը կամ աննիւթը դժուարութեամբ է պատկերացնում ժողովուրդը, ուստի և եթէ մի ժողովուրդ զուրկ չէ վերացական գաղափարներից, նա դրանց մարմին է տալիս և արտաքին, ղգայական աշխարհում տեղաւորում: Այս փաստն ամէն քայլափոխում ստիպուած է արձանագրել ժողովրդական հոգեբանութիւնը: Հայ ժողովուրդը ո՛չ միայն զուրկ չէ եղել և չէ գաղափարականից, այլ նա նահատակ է իւր գաղափարների, յաւելած նախնական ճշմարտութիւնների:

Արտաքին և ներքին պատմագրութիւններից ստուգապէս արձանագրուած ճշմարտութիւն է, որ հայ ազգը քրիստոնեայ ազգերից հնագոյնն է. նոյնքան ստոյգ մի ճշմարտութիւն է և այն, որ հայ ազգը ամէն ինչ զոհել է ի սէր քրիստոնէութեան և այսօր մենդեա ո՛չ մի այլ ազգ էնթակայ զէ կրօնական հաղաթանքի, հայ ազգն է միայն, որ հարեւրներով և հաղաթներով նահապաղներ է որպէս քրիստոնէ վարդապետութեան հետեւելու: Ի պատիւ մարդկութեան պիտի խոստովանենք, որ այնպիսի ժամանակի մէջ ենք ապրում: Երբ քաղաքակիրթ ազգերը զբաղուած են քրիս-

տոնէութեան գաղափարի համար նահատակուած հայերով:

Ի՞նչպէս է այդ, որ հայ ժողովուրդը նիւթական և բարոյական թշուառութեան մէջ դեռ չէ մտացել վերացական վեհ գաղափարներն և դեռ ընդունակ է զոհուելու դրանց համար: Ո՞վ ուսումնասիրել է հայ ժողովրդի կեանքը, նա գիտէ, որ ո՛ր էլ լինի հայը, աշխարհիս որ անկիւնն ևս ձգէ նրան հալածանքը, նա կանգնում է իւր համար մի տաճար, մի քարէ մատուռ, որ մարմնացումն է նրա հոգեկան բոլոր բարձր գաղափարների: Եկեղեցին անբաժանելի է հա, համայնքից, այս խոստովանում են և օտարները: Այդ եկեղեցին է ահա որտեղից հայն սպասում է ամէն բարիք: Այդ եկեղեցին է, որ ի մէջ կենդրոնացնում է հայը աստուած պաշտութեան, սրբութեան հայրենի առաքելութիւնների գումարը:

Նոյն այդ եկեղեցին է միւսնոյն ժամանակ այն շղթան, որ կապում է ցրուած հայերին և յիշեցնում է ամենայն օր իւր մէջ աղօթողներին՝ թէ նրանք ունին հեռաւոր և կարօտ եղբայրներ, որոնց համար պէտք է աղօթել: Այսօր այդ եկեղեցին յիշեցնում է աշխարհիս չորս կողմում ցրուած հայերին, որ նրանք մի ընդհանուր կենդրոն ունին, մի տաճար ունին, որի մէջ «Զագեսաց մեղ լոյս է աստուածան աշխարհի»: Իւր հայրենի երկրից հեռու, մայրենի բարբառը մտացած, օտար կեանքով ապրող հայն մի սրբալայր միայն յիշում է, որ թունդ է հանում նրա սիրտը և հազարամեայ անցեալից գոնէ մի մասն է յիշեցնում:

Ս. Էջմիածնի այս առկայծող յիշատակը նման չէ՞ արդեօք փառաւուր ճրագալոյցից մնացած մի աղօտ ճրագի:

Այս աղօտ ճրագն անգամ զօրաւոր հողմերից մարելու և ձէթի պակասութիւնից հանդիչելու վտանգի մէջ է եղել միշտ. շնորհակալ լինենք այն անհատներից, որոնք իրենց հոգու կրակից միշտ փոխ են տուել

Հայրենի ճրագին և թող չեն տուել որ նա հանգչի:

Քանի որ դեռ կանգուն էին Հայրենի փառքի կոթողները, քանի դեռ Ս. Էջմիածինը միակ յուշարձանը չէր Հայաստանում փառաւոր անցեալից, աղօտ էր այդ կաթուղիկէի փայլը: Չորրորդ դարու սկզբում հիմնուած, հաղիւ երբեմն երբեմն միայն յիշատակուում է Ս. Էջմիածինը, սակայն հէնց որ նսեմանում են Հայաստանի միւս մեծապայծառ կենդրոնները, Ս. Էջմիածինն աւելի և աւելի է ճաճանչներ արձակում: Եօթներորդ դարում (618) երկրորդ անգամ նորոգուելով կոմիտաս կաթուղիկոսի ձեռքով Նոր քաղաքի կաթուղիկէն, կամ Շողակաթ, ստանում է այն նշանակութիւնը, որ այժմն ունի, այսինքն է կենդրոնական սրբավայրի: Եօթներորդ դարը պէտք է սկզբնակէտ համարել Հայաստանի բարեշինութեան քայքայման և ժողովրդի ցրուելուն, մի կողմից բիւզանդական կայսրներն էին դատարկում բազմամարդ Հայաստանը և նրա ժողովրդով պատուար կանգնում Մակեդոնիայում սլաւոնների, իսկ Սիկիլիայում և Կիլիկիայում նոր զարգացող արաբների դէմ: միւս կողմից մահմետական հեղեղն էր սրբում տանում Հայաստանի քաղաքներն ու գիւղերը:

Այդ դարումն է ահա, որ հնչում է Ս. Էջմիածնի առաջին օրհներգը: Սահակ Գ. կաթուղիկոս Չորափորեցու գեղեցիկ շարականը: Երեք քառատող տներից հիւտուած այս չքնաղ շարականը Ս. Էջմիածնի նշանակութիւնը միանգամից հաստատեց և այսօր դա է հնչում հայ եկեղեցիներում: Երբ Ս. Էջմիածնից ողջոյն է հասնում հեռաւոր հայրերին:

« Էջ Միածին ի Հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա.
Չայնք հնչեցին
Սանգարամեք անգնդոց »:

Այս պարզ և անպաճոյճ տողերն են նկարագրում Էջմիածնի հաստատութիւնը, որի հետ կապուած է լոյսի յաղթանակը խաւարի վերայ:

Սոյն այդ հաստատութեան հետ կապուած էր և երկու մեծապանծ սրբերի յիշատակը, որոնք ձեռք ձեռքի տուած գլուխ հանեցին Հայաստանի փրկութեան գործը. ահա թէ ի՛նչպիսի պարզութեամբ արտայայտուում է այդ երգիչը.

« Տեսեալ զլոյս մեծ
« Հայրապետին Գրիգորի,
« Պատէր ցնծութեամբ
« Հաւատացեալ արքային »:

Բանաստեղծն աւելորդ է համարում այդ լոյսն և նրա ծագումը գրուատելու, նա հօգս է քաշում դրա պահպանութեան համար, ուստի յորդորում է.

« Եկա՛ք շինեսցուք
Սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի »:

Որպիսի վեհ խօսքեր և որպիսի սրտաբուլիս պարզութեամբ ասուած: Սա կարծես մի կտակ է Ս. Գրիգորից ու Տրդատից մնացած, Սահակ Չորափորեցուց յիշեցրած: Թող հրձուին սուրբ հօգիք, նրանց կտակը սրբութեամբ է պահել հայ ազգը: Երջանի կ է Սահակ հայրապետը, որովհետեւ նա իւր մահից յետոյ կրկին և կրկին բարերար հանդիսացաւ իւր կտակներով:

Վերջին կաթուղիկոսական համադգային ժողովին երբ հնչում է. Էջ Միածին ի Հօրէ, շարականը, հայ ազգի բազմաթիւ ներկայացուցիչները, որոնք այնքան հեռաւոր կեդրոններիցն էին, միաձայն երգում են այդ շարականը, պատգամաւորներից մէկը դիտում է ցաւ ի սիրտ, որ մի քանի ռուսահայ աշխարհական պատգամաւորներ լուռ են և չեն կարողանում ձայնակցիլ իրենց օտարերկրեայ պաշտօնակիցներին:

Այս մի տխուր փաստ է, որովհետեւ ի՞նչ թեմական պատգամաւորներն անգէտ են այդ փառաւոր երգին, ի՛նչ կը լինին նրանց ընտրողները: « Արարատն » իւր պարտքն է համարում Ս. Էջմիածնի կաթուղիկէի տօնին ընծայել իւր բաժանորդներին այդ շարականը ձայնագրեալ, որպէս զի մասամբ գո-

նէ օգնած լինի այդ մեծ կտակի պահպանութեան:

Բ.

Ներսէս Շնորհալին, մեր եկեղեցական մեծ երգիչը նուագում է Ս. Էջմիածնի փառքըն ու նշանակութիւնը «Եգեօիոյ ողբ»ի մէջ, իսկ զբան հետեւող բանաստեղծների շարքը անդուլ հնչեցնում մինչև մեր օրերը Ս. Էջմիածնի գովասանքը:

Բացի «Եգեօիոյ ողբ»ի տողերից Շնորհալին Ս. Գրիգորին նուիրած տաղի մէջ («Սրովբէիցն ձայնին») Ս. Էջմիածինն աչքի առաջ ունի երբ երգում է.

« . . . Կանգնեա՛ վերստին զանկեալքս :
Ժողովեա զգրուեալսն ի յաղինս :
Գերեաց գերեգարձ լինել
Եւ դառնալ ի Կոստանայնիս : »

Հին տաղարաններում Ս. Գրիգորի մասին երգուած ներբողների, մաղթանքների մէջ անբաժան է և Ս. Էջմիածնի յիշատակութիւնը: Այդ քերթողների անունները դժբաղդաբար անյայտ են մեզ: Յառաջ ենք բերում մի քանի տուն այդ տաղերից, որ արտագրում ենք Ս. Էջմիածնի ձեռագրատան թ. 280 ձեռագրից, որ գրուած է 1394 թրուին, Սիս քաղաքում: ¹ Այս տաղերը ձեռագրի ձևի տաղիցն են, որ սկսում է. «Մըտեալ առաջի քո ընտրեալ հովիւ . . . »:

« Ե՛լիզաբէ՛ ի՛մնու՛ղի՛ շայտասանեաց

Այսօր զմանրունսն ժողովեալ իւր համաձայն,
Չայնիւ գոչէ առ քեզ մաքուր և պատուական
Ո՛վ քահանայ, և առաջնորդ իւր փրկական,
Գրիգորիոս, ո՛վ մեծ փեսայ, հայր սրբազան,
Կամ խրթնացեալ ի յիշատակքս քո անուան:

Քաւղս բարձեալ կամ խայտառակ քո յանդիման,
Կամ իմ խաւսել բանս աղերսիւ և թախանձմամբ,
Զիս դու լըբեր թողեր անտէր անազնական,
Ո՛վ իմ հովիւ սուրբ և մաքուր և սեփական,
Նախ խաւսեցար տեսեամբ զեկեալս ինձ դատաստան

Եւ արդ կըրեմ՝ զայն ես հննիք ըստ արժանման,
Հայեաց և տես գայլք ճապաղիք նրման դիւաց,
Հանեն յինէն զորգեակքս ի գիրկս մաւրս անարժանս:
Քննեաց ըզաւրսն իմ սենեկիս դատակցութեան:

1. Այս տաղարանս նշանաւոր է իւր հունթէամբ եւ պարունակած տաղերի տորութեամբ: Առաջիկային կը տանք այս ձեռագրի մանրամասն նկարագիրն եւ անտիպ տաղերի արտատպութիւնը:

Հընձան եհար կուսիս ի մէջս անպարտական,
Վասն այտորիկ ես կամ, ի լալս անյագական,
Ոչ ունեւոյ ինձ մխիթար կամ ազնական,
Որգեակքն յիմոյ սրահէս հեռի գոլ ցանդանան,
Եւ աստ շրջնն ժըպըհոյժեամբ ինձ յանդիման,
Արդար է տէր Աստուած ի յայսմ մեծ դատաստան,
Զի դառնացաւ յիմոց որդւոցն սեփական,
Մերժեաց յինէն ըզգեհարանն իւր պատուական,
Ընկեց ի բաց ըզսըբարան իւր մաքրական,
Կործանեաց զիմ աշտարակ վայելչական
Եւ մահարձանք ըստ (sic !) դողալով առեալ ան-

թագաւորքն իմ և իշխանքըն ջընջեցան,
Եւրէնք բարձան և քահանայքըն կորացան,
Եղև տէր ինձ թըլչնամի արգարական,
Կործանեւոյ զիմ ժողովուրդս ի տառապանս,
Պակասեցայ արտասուելով զաւր հանապաղ
Զի իմ պայծառ փառքըն յերկիր կործանեցան . . .

Այս ձևով շարունակում է կաթողիկէ եկեղեցին իւր գանգասն ու միջնորդ է ձըգում Լուսաւորչին Աստուծոյ առաջ:

Մեծ է և այժմ հայ ժողովրդի վստահութիւնը Լուսաւորչի վրայ, նա այդ վստահութիւնը հիմնել է մեծ սրբի բարեխօսութիւնների վրայ, որ դարերի ընթացքում օգնութեան է կանչել հայն և փրկուել:

Գ.

Այս ողբերի շրջանը Շնորհալուց քիչ յետոյ պիտի սկսած լինի: Վերևում յիշուած տաղարանի մէջ կայ դարձեալ մի տաղ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուան ձօնուած: Օտար, Հայաստանից դուրս երկրումն է երգուած այս երգը և երեք մասից է բաղկացած, առաջին մասը բանաստեղծօրէն նկարագիր է Ս. Լուսաւորչի տեսիլան առաջին մասին, այն է՝ Շողակաթ Ս. Էջմիածնի եկեղեցու շինութեան յատակագծի, երկրորդը Ս. Գրիգորի բերանով նկարագիր է այն տեսիլան շարունակութեան, ուր ապագայի մասին գուշակութիւններ կան, վերջաբանը կամ երկրորդ մասը մի յորդոր է օտար երկրում ջրուած հոյերին ուղղուած, որ չը մոռանան իրենց հայրենիքը:

«Մի մոռանայք՝ մի մոռանայք ըզհայրենին աշխարհ, ըզհայաստան քարինսն»:

Այս յորդորին յաջորդում է Ս. Գրիգորի ձեռքով եփրատուած կատարուած մկրտութեան նկարագիրը: Ահա այդ տաղը.

ԱՅԼ ՏԵՂ ՏԵՍԼԵԱՆ ՍՈՒՐԻ ԼՈՍԱՒՈՐԶԻՆ.

(Տաղ ժող.)

Ճառագայթեալ արեգակն հայաստան աշխարհի ծագեալ, ո՞վ Գրիգորինոս,
 Տեղի ետ խաւարն հաստատեցաւ լոյս աստուած զիտուութեան ի քէն Լուսաւորիչ,
 Ստան հիւսիսական մեղաց հայեցաւ. կաթեալ նըշուից բանք ի տուն Թորգոմայ,
 Որդին աստուծոյ ի մէջ մեր իջեալ բիրաւք զարաց երկնից խառնեալ ընդ մարդկան,
 Յաղժող թագաւորն ուռամբ սըլացեալ եհար ի մէջ քաղաքիս զմոլութիւն չարին.
 Հարթեաց ընկուծիւն իւր աստուածութիւնըն հանդիստ ըզբո ժողովուրդն,
 Գողացեալ սարսեաց յահեղ հընչմանէն. անգունդ ներքին խորոց երկիրս պանծացաւ.
 Շինեցաւ տաճար անմարմին քեզ հիմն և արինակ նոր մեծըզ Մովսէս,
 Գետ շնորհաց հոգւոյն աստուծոյ բրդեալ ծընաւ ըզգառինս լուսակիզն,
 Ո՞վ տեսնող, որպէս և ծանեար զկնի ծնեալքս, հանեմք այժմ արեան ճապախիս,
 Խօստովանիմք առ մեզ եղեալ ելք կանխաւ քո տեսլեանդ, ներեալ բարեգութ,
 Եր մերժեր զմառայքս քահանայապետ սուրբ. միշտ դու քաւեցես,
 Որ ետք առ Քրիստոս, միշտ կենդանի լեր մեզ բարեխաւս մեղուցեալ հաւտիս,
 Ի փառս մեծ անուանն որում միշտ հանցուք գոհութիւն ի ձեռքս քո Աստուծոյ.

Ո՞վ աշակերտեալ իմ նոր ժողովուրդք. ասէր սուրբ Գրիգոր.
 Զբարթունս տեսի խորհուրդ հրաշալի, եկայք լրւարուք,
 Երդ բացաւ հրեշտակ տեսնն իջեալ ձայնիւ զիս կոչեաց,
 Ո՞վ Գրիգորինոս արի և հայեաց, որ քեզ ցուցանեմ:
 Ի վեր նայեցեալ տեսի ըզխորանս երկնիցըզ հերձեալ,
 Լոյս սաստիկ իջեալ յերկիր կառուցաւ սիւն ըզբանչելի,
 Զաւրք անշափ թեաւք, չըքնաղ պատկերաւ ընդ նա հոսէին,
 Թագաւոր ահեղ ի մէջ հրեշտակացըն սըլացեալ իջաւ.
 Ուռամբ նա ոսկի բախեաց ըզյատակ միջոյ քաղաքիս,
 Թընդիւնըն հարթեաց դաշտ հաւասարեաց զաշխարհս ամենայն,
 Զաւրքն ապա սրկան շինել ձեզ տաճար ի մէջ քաղաքիս,
 Խարիսխ ոսկեղէն եզին սիւն հրեղէն և խաչ լուսեղէն,
 Կանգնեցին չորիս ուր վրկայքըն եղեն սուրբ Հոփիսիմեանք,
 Զորից սեանց վերայ կամարս ձգեցին ահեղ վայելուչ,
 Գըմբեթ ի կատար լուսոյ կամարացն կապեալ սքանչելի,
 Անդ տեսանէի ներքոյ խորանին զվրկայսըն կուսանն,
 Զգեցեալ Հոփիսիմէ բեհեզս ըն, երովքն, ուրախաճեմ էին,
 Սեղան ի ներքոյ կողմըն խորանին զսրբութեանց տեսի,
 Ուստի յորդառատ գետ ծաւալեցաւ աշխարհս ծովացաւ,
 Սեղանս տերունի պըսակեալ խաչին ի ծովըն տեսի,
 Նըման աստեղաց անթիւ բազմութեամբս նորա ծագէին,
 Հաւտ ապա այժեաց անթիւ թրխատիպ ի ծովըն մըխեալ,
 Անբի լուսակիզն զարձեալ ելանն պայծառ և չըքնաղ,
 Որոց թեք բուսան սըլացեալ մըտին ի կարգ հրեշտակաց,
 Բայց ուրախարար ահեղ այս տեսլեանս վախճան էր ի սուգ,
 Զի հաւատքըն ծընան, անթիւ բազմացան և արտեղեցան,
 Ոմանք ի գառանցն ի գայլս փոխեցան և զհաւտըն հարին,
 Երեան ճապաղիս զանմեղաց տեսեալ տարակուսեցաւ,
 Հրեշտակն ինձ ասէ. յետին ժամանակն է այդ լինելոց,
 Յուխտէ սրբութեան հովացըն կարգէ գայլք լինեցին,
 Յանրնա խոցոտնն զհաւատըն վրրդովեալ, հոգւով սպանանն,
 Իսկ որ համբերէ խղառ նա կեցցէ, յերկինս վերացի,
 Զգայլսըն հըրդեհէ հուր մեծ գեհննին յանվախճան տանջանն,
 Իկամուտ լիցուք և մեք զգուշացուք յահեղս երկիւղէ,
 Տեսլեանս լըրոնն ոյր ուր է նախաւ, որք տեսանն,
 Մեղաք և տեսաք զնախաճառ խորհուրդ. մեք կատարեցաք,
 Կարծրացան անձինք քո աշակերտացս, ընդդէմ քո տեսլեանս,
 Սակաւք իմացան և հնազանդեցան, աւտարք կոչեցան,
 Եղաք նախասինք մերոց գրբացեաց. ծաղր թըշնամեաց,
 Դարձ հայեաց յայդիս զոր տընկեաց աջ քո սուրբ Լուսաւորիչ,
 Կանգնեալ զկործանեալքս աղաւթիք կեցոյ մեծըզ բարեխաւս,
 Ի փառս փրկչիդ մերոյ Յիսուսի այժմ և յաւիտեան:

Որդիք գերութեան, իմ ժողովուրդ ծընեալ յերկիր աւտար, որ ժողովեալ էք աստ,
 Մի մոռանայք, մի մոռանայք ըզհայրենին աշխարհ ըզհայաստան քարինան.

եկայք արտասուաւք մեք ընթացուք մրտաւք այսաւր ի նոյն գտաւնս ի տեղին տաւնել:
 Անփորձքս գլթամ ի հող հետոց Լուսաւորչին իմոյ, լամ խնդրեմ ըզնոյն:
 Նայեցեալ տեսէք զսուրբն Գրիգոր, նոր հայրապետ եկեալ նորահաստ հաւտին:
 Ի մեծն եփրատ առեալ ածէր զայն բազմութեան ամբոխն մըկրտութեամբ աւրհնեալ:
 Կայր մեծ քահանայն բեհեզագեաց աւազանին ընթեր, որ ի դրախտէն բրդիէր:
 Հուրջ պարեն հրեշտակք բուրմամբ խնդոց և լապտերաց ջահից (ք) զերեքսրբանն երգեն:
 Մատեաւ ի խորհուրդն Գրիգորի մահուան յաւժար և փոյթ մեծն Տրդատ արքայն:
 Ի հարջ հընգետասան անդր ի խոնարհ իջեալ նրմա ըզկնի Հայաստանեաց ժողովն:
 Զուրբն զետեղեալ շրջան առնայր անդրէն պաշտել զբանակն և զուարձանայր ի նոյն:
 Յիսուս զուարձացեալ ի նորածին յեղբարն յո(յ)ղջոյն իջեալ բանայր զեր(կ)ինս հանդէպ:
 Սիւն լուսոյ ձրգէր վերոյ նոցա շրքնադաձև խորան արեգականն յաղթող:
 Խաչըն պարծանաց և խաչեցեալն ի նմա ընդդէմ նոցա կայր նրկարեալ ի նոյն:
 Այս քեզ Գրիգորիս և զեռարոյս մանկանց եղբարցդ իմոց վայելչութեան տաճար:
 Ապա քահանայն մեծ ծաւալէր զորդեգրութեան մեռոնն աստուածաղարջ ձեռաւքն:
 Ով ըբանելեացս, շուրջ բազմութեան նա իւրովի խաղայր և քրիստոնեայս կըքէր:
 Ի հուրցըն բազմաց մի կաթ իւզոյն ոչ պակասեաց այսաւր, այլ բաւականացաւ:
 Հրեշտակք հընչէին, նոր մըկրտեալք, զուք զգեցայք զԳրիստոս, էք այլ որդիք:
 Եկայք ձաւեցէք այսուհետև զտէրունական մարմինն գլխոյն անգամք եղեալք:
 Բաշխէր հայրապետն զսարսափելին ամենեցուն զպարզեն, լուսաղարդեալ մանկանցն:
 Այսպէս կոչեցար, ով Հայաստանս ի Գրիգորէ սրբոյ և միացար յԱստուած:
 Բնեակ(յ) և ծանիր ում այլ ազգաց այսպէս եղև շնորհ որպէս և քեզ տեսեր:
 Ուր քո յիշատակ կամ գոհութիւն այս մեծամեծ ձրիցս, ով ժողովուրդդ խիստ:
 Թող զունայնութիւնդ աւտարացեալ ամբարշտեալ գայլոցս, և նորոգես դարձեալ:
 Զայնիւ նրզովն զհերիտիկոսքն յուխտէ առաքելոցն և սուտ քահանայիցն:
 Բաց է դուռք երկնից, ով տառապեալ իմ կըշտամբեալ ժողով, փութամ ի Գրիգորին քո գող:
 Հաւատաւ նրմին (·) և նորացոց (sic) սրբոց հայրապետացն և զրդջացիր ընդ նոյն:
 Փառս վերահընել, երրորդութեան ի յանապատում ի կեանն միշտ յախտեանս ամէն:

Պ.

Ողբերի շրջանը Ս. Ելմիածնի վերաբե-
 րութեամբ սկսուած էր արդէն. մի ներքին
 ձգտումն կար գէպի այդ մեծ սրբավայրն,
 ուստի բոլոր բանաստեղծները հին փառքե-
 րըն յիշեցնելով ամէնքի հայեացքներն դէ-
 պի այդ սրբավայրն են ուղղում:

Երեքտասաներորդ դարու հայ եկեղեցւոյ
 փայլուն ջահերից մին, Ստեփաննոս Օրպել-
 եանը, Սիւնեաց աշխարհի մետրոպոլիտն և
 հայոց պատրիարքի պրօտօֆրօնտէսը կամ
 նախաթոռ եպիսկոպոսը, առաջինը չէ ան-
 շուշտ, որ ողբացել է Ս. Ելմիածնի անկման
 վերայ: Օրպելեանի ողբը մի գեղեցիկ յառա-
 ջաբանով և հարուստ ծանօթութիւններով
 հրատարակել է պ. Կ. Կոստանեանցը¹: Այս
 ողբի լեզուն և ոճը մատենագրական մեծ
 արժէք չունին, սակայն ուշադրութեան ար-
 ժանի են դրա մէջ արտայայտուած զգա-
 ցումները:

Ինչպէս հրատարակիչն իրաւամբ գիտել
 է արդէն, երգիչը «եղեսիոյ ողբի» ազգեցու-

թեան տակ է գտնուում, թէպէտև երբեմն
 ս. Գրքի նմանութիւններ և ս լուում են: Ամ-
 բողջ ողբը մի եղերերգութիւն է վիպական
 ձևով, որի մէջ Ս. Ելմիածինը պատմում է
 իւր գլխով անցածները.

- ԳԼ. Է. Է Լճուր ինձ, երկին և դասք վերին,
 Միտ գիր, երկիր, և որ ի սմին,
 Ես թագաւոր էի նախկին...
- ԳԼ. Ը. Արեգակունք առ իս կային,
 Պայծառ և ահեղ քան զզգալին,
 Հնորհն անմահ քահանային,
 Պատին մեծ քահանային.
 Փեսայն ձեմէր յառագաստին...
- Իւր փառքերը մի առ մի պատմելուց յե-
 տոյ, նկարագրում է անկումը.
- ԳԼ. Թ. Ե Յանկարծակի գիպայ չարին,
 Որ չէ եղեալ յազդ մարդկային...
 Փեսայս այրի թողեալ բնակին
 Հալածեցաւ յաշխարհ ստորին.
 Որդեակն իմ սեգ Արշակունին,
 Որ անդրանիկն էր և նախնին,
 Զթողակն էա մահու յետին...
- ԳԼ. Ժ. Բայց միւս ևս այլ կայր նորածին,
 Որ զգուշութեամբ սնուցանէին,
 Գրգուեալ անուամբ Բագրատունի
 Բագրատունիներէից յետոյ եկած թըշ-

1. Ստեփաննոս Օրպելեանի, Ողբ ի ս. Կաթողիկէն.
 Թիֆլ. ապ. Վարդանանի 1885 թ.:

ուսումնասիրութիւններն էլ մի առ մի նկարագրելուց
յետոյ վերջացնուով է այս խօսքերով.

ԺԳ... « Արդ մենացեալ յանվայր գաշտին
Ձերդ զգազան անապատին
Ձաչուերս ածեմ կողկողագին,
Ձայն արձակեմ ողորմագին.

Այս ձևով ողբը վերջացնուով է երգիչն
ու սկսում է յորդոր կարգալ, որ Ա. Էջմիած-
նի որդիք դառնան իւրեանց մօր գիրկն ու
վերսկսին պայծառացնել Հայրենի տաճարը:

Յուսոյ ձայնն է, որ հիշում է բանաստեղ-
ծի վերջին տողերից.

ԺԷ. « Թողճեմք զողբանքս ցաւագին,
Առնեմք աւարտ լալեաց բանին.
Յոսոսորէլ զ' պար քնսին... »

Այս յոյսն է ահա, որ ներշնչում է եր-
գչին հետեւեալ տողերը, որի մէջ նա յայտ-
նում է, որ Աստուած պիտի վերականգնէ
ամէն ինչ և աւելի փառաւոր կերպով այն-
պէս որ ամէնքս գոչենք.

« Աւջինս է մեծ քան զառաջինն. »
Ե.

Օրբէլեանից յետոյ երգիչների ձայնն
անընդհատ յիշեցնում է Հայերին Ա. Էջմիած-
նը, որով և նախապատրաստում նրա վե-
րականգնումն 1441 թուին:

Ամբողջ ժե. դարու ընթացքում մի
խորհուրդ էր բոլոր Հայերի սրտերում, որ ի
իրագործման իրենց նուիրեցին ժամանակի
մեծ մարդիկ: Այդ խորհուրդն էր Ա. Էջմի-
ածնի վերականգնութիւն, Մայր Աթոռի
վերականգնումը: Այս դարու երգիչներէից Ա.
աքբել Բաղիշեցին մի ընդարձակ ոտանաւո-
րով աւանդել է մեզ Ա. Էջմիածնի գովասան-
քը, որ առաջ ենք բերում այստեղ.

ՏԱՂ ԵՒ ԳՈՎԱԼԱՍՆԻՔ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՆ
ԷՋՄԻԱԾՆԻՍ.

ՅԱՌԱՋԵՆ ԶԱՐԴԱՊԾՏԸ.

(Ձեռագ. Ս. Էջ. № 466. Թ. 195 ր 497^ա).

Ահա ասեմ բան գովեստի,

Մաւրդք լուսոյ սուրբ տաճարի,

Աստուածորդոյն իջման տեղի,

Աթոռ անմահ թագաւորի.

Թէպէտ չունիմ ըստ արժանի,

Ասել նմա երգ ցանկալի,

Քանցի մեղաւոր յաշխարհի,

Միտքս հոգով յոյժ ցնորի.

Ահա ցընծա՛ Վաղարշապատ,

Մայրաքաղաք երկնաբանտակ,

Ամուր պարիսպ բարձր աշտարակ,

Յեռեալ ակամբ գոյն ըզդունակ,

Բարգաւաճեալ փառաւք անձառ,

Էջմիածին լուսով պայծառ,

Յարկ օրհնութեան աստուածարեալ,

Լեռան մարուր աստուածարնակեալ,

Գովեալ արին առաքինեաց,

Գրիգորիոս մեծ արիւսեակ,

Որ քրտնաջան ի մըշակաց,

Ողկոյզ բերեալ մեզ վաղահաս,

Այլ դուք որդիք հօրըն մեծի,

Լուսաւորչին սուրբ Գրիգորի,

Յաւժար սրտիւ փափագելի

Ձայնակցեցէք իմոյս բանի.

Արդ փափագեմ տենչմամբ սրտի,

Գովել ըզմեր յուսոյն տեղի.

Ձաթոռն մեր սուրբ Գրիգորի,

Հայաստանեայց լուսաւորչի.

Ձայն որ Քրիստոս ընտրեաց յերկրի,

Ձիւր հանգըստեան տուն և տեղի,

Եւ էջ փառաւքըն հրաշալի,

Նրման հըղաւր թագաւորի.

Էջմիածին անուն պատուեալ,

Ամենեցուն երկրրպագեալ,

Ի հրեշտակաց բարեբանեալ,

Ի մարդկանէ փառաւորեալ,

Էջմիածին վերնոյն նրման,

Ուր անմարմնոց դասուց կայեան,

Որով օրհնի միշտ անխափան,

Անեղն Աստուած և անվախձան.

Էջմիածին երկինք յերկրի,

Գրմբեթմաճ և շինեալ մեծի,

Յորում եցոյց զՅիսուսն Քրիստոսին,

Անեղն Աստուած լուսաւորչին,

Էջմիածին աթոռ մեծի,

Դու Աստուծոյ ահաւորի,

Յորում անձառ լուսն բազմի,

Երրորդութիւն Աստուածն մի.

Էջմիածին դու դուռն երկնից,

Ի քեզ իջեալ ստեղծօղն էից,

Հանդերձ զաւրաւք հրաբան սեռից,

Այն որ ընդ Հօր աթոռակից,

Էջմիածին դու բարձրելոյն,

Եւ բնակարան դու օծելոյն,

Որ յայտնեցար հաւր մեր նախնոյն,

Լուսաւորչի սուրբ Գրիգորոյն.

Էջմիածին դու նոր Խորան,

Հանգիստ կամացն աստուածութեան
 Սուրբըն Գրիգոր նոյեան տապան,
 Շինեաց ըզքեղ տեղ փրկութեան,
 Էջմիածին դու տաղաւար,
 Սուրբ Միածնին եղբ տաճար,
 Զի աւետիքն ի քեզ էառ,
 Հայրն որ որդոցս եղև պատճառ,
 Էջմիածին երկրորդ Սինիա,
 Ի քեզ իջեալ երկնից արքայ,
 Անդ Մովսիսի տեսեալ ըզնա,
 Եւ աստ Գրիգոր այլ գերակայ,
 Էջմիածին նրման ցուցար,
 Գու Սաղիմայ արև յարմար,
 Անդ զաւրութիւն Տէր մեր արար,
 Ի քեզ Հայոց առանձնարար,
 Էջմիածին պայծառ Խորան,
 Քան ըզնախնոյն վրկայութեան,
 Անդ էր աւրէնք փոփոխական,
 Եւ քեզ նորոյս ճըշմարտութեան,
 Էջմիածին դու Հարնարան,
 Նրման վերնոյն անդուգական,
 Որում կուսանքըն Հարսնացան,
 Սուրբ Հովհիսիմեանքըն պատուական,
 Էջմիածին տեսլեան տեղի,
 Լուսաւորչին սուրբ Գրիգորի,
 Զի արարիչն ամենայնի,
 Ետես մարմնով իջեալ յերկրի,
 Էջմիածին դու տես Խորան,
 Թագաւորին երկնից կայան,
 Հպատակաց ժողովարան,
 Քահանայից աւրհներգութեան,
 Էջմիածին տեղ պարմանաց,
 Լուսաւորչին Հայաստանեայց,
 Վերապատուեալ ի հրեշտակաց,
 Եւ իջմանէ բանին կենաց,
 Էջմիածին ժողովարան,
 Ազգիս մերոյ թորգոմական,
 Որում եղեալ եմք ցիր և ցան,
 Վասն մերոյ անարգութեան,
 Էջմիածին տեղ նորոգման,
 Ազգիս մերոյ թըշտաւական,
 Խնդրուածովք հաւր մեր հայցման,
 Սուրբ Գրիգորի Պարթեական,
 Էջմիածին աղբիւր կենաց,
 Քաղցրալըտակ յորդախաղաց,
 Զոր և ետես հայրն շնորհաց,
 Զայծն ի գառինս փոխանակեաց,
 Էջմիածին Գրախտ լուսով,
 Նոր ձիթենիք բուսանելով,
 Սուրբ Սահակայ տեսանելով,

Եւ զյապագայն գուշակելով,
 Էջմիածին անմահ այգի,
 Սուրբ ողկոյղին հաւր միածնի,
 Որ միշտ ի քեզ պատարագի,
 Անրիծ արիւնն Քրիստոսի,
 Էջմիածին ծով սանորակ,
 Զոր և ետես սուրբըն Սահակ,
 Զի պարգեւեաց հոգոյն յատակ,
 Տուցանելով մեզ արինակ,
 Էջմիածին դու բուրաստան,
 Տրնկեալ աջովն հայրական,
 Վարգն որ ի քեզ անոյշ բուրման,
 Լուսաւորիչըն հայկազեան,
 Էջմիածին գաւիթ մեծին,
 Գու յաստուծոյ ահաւորին,
 Որք աստ ի քեզ գան ժողովին,
 Ապա վերին արժանացին,
 Էջմիածին երկնից նրման,
 Գու գերագոյն և պատուական,
 Քանդի ստեղծաւոյն արեգական,
 Ի քեզ իջեալ կերպիւ մարգկան,
 Էջմիածին մայր հաւատոյ,
 Եւ ապաւէն տեղիք յուսոյ,
 Բարեաց պատճառ և սերտ սիրոյ,
 Գու ընտրեցար ի յԱստուծոյ,
 Էջմիածին անեղաչէն,
 Տաճար շինեալ ի յարարչէն,
 Հաստատ հիմամբ ի հաւր բանէն,
 Որ ձևացոյց Լուսաւորչէն,
 Էջմիածին դու հիմնարկեալ,
 Եւ ուժով քաղաք շինեալ,
 Լուսաւորչին քեզ աւարտեալ,
 Մեր փրկութեան պատճառ եղեալ,
 Էջմիածին շնորհաց բաշխաւդ,
 Զմեզ խաւարէ ի լոյս բերաւդ,
 Ազգիս Հայոց որ նորոգաւդ,
 Եւ ի յորդիս լուսոյ ծընաւդ,
 Էջմիածին դու գանձանակ,
 Անճառ լուսոյն դու աշտանակ,
 Տանըս հայոց ամուր պատուարք,
 Եկեղեցոյ բարձր աշտարակ,
 Էջմիածին փառաւք լըցար,
 Քան ըզ Թափաւր պայծառացար,
 Զի անդ մարմնովն որ լոյս ցուցար,
 Նոյն լուսակերպ առ մեզ իջար,
 Էջմիածին կաթուղիկէ,
 Հիմնարկեցար ի Քրիստոսէ,
 Աւարտեցար ի Գրիգորէ,
 Զարդարեցար ի Տըրգատէ,
 Էջմիածին պարմանք հայոց,

- Քան զամենայն ալգս ըստորնոց,
- Զի արարիչն արարածոց,
- Զքեզ ընութեամբ արդարացոյց,
- Էջմիածին տեղ փառաւոր,
- Անուամբ ահեղ և սքանչաւոր,
- Գեղեցկաշէն և հրաշաւոր,
- Բարձրահայեաց և ահաւոր,
- Էջմիածին զու գերագոյն,
- Շնորհ առեր զու բարձրելոյն,
- Չափակցեցար անեղ աջոյն,
- Զարդարեցար ի Սուրբ Հոգոյն:
- Էջմիածին քև ճոխացան,
- Սուրբ հպատակքն ամենեքեան,
- Արիստակէս և Վրթանէս,
- Եւ Գրիգորիս Պարթեական,
- Էջմիածին սուրբ Վրթանէս,
- Արիստակէս, Յուսիկ, Ներսէս,
- Ի քէն շնորհք առին պէս պէս,
- Եւ ճոխացան անձառապէս:
- Էջմիածին նոր նորոգեալ,
- Եւ վերըստին պայծառացեալ,
- Ի քեզ Գրիստոս կրկին իջեալ,
- Եւ զաւրհնութիւն քօ նորոգեալ,
- Առաքելէ մըտաք տրխար,
- Եյսքան բաներս անկեալ ի շար,
- Եւ որք երգէք սրբաւ յաւժար,
- Յիշման արէք զիս արժանի,
- Եւ որք յիշեն զմեզ ի բարին,
- Եւ ասացին զՏէր ողորմին,
- Յաւուր մեծի դատաստանին,
- Արժանին լինին կենաց ձայնին:

Յիրաւի հպարտութեամբ է ասում մեր անցեալ դարու մեծ հայրապետներից մին՝ Սիմէօն կաթողիկոսը, թէ ֆրկիչը միանգամ հանուր մարդկութեան համար իջաւ իսկ մի անգամ ևս յատուկ մեր ազգի համար: Այս հաւատով է որ հայ ազգը յորդել է և յարգում է Ս. Էջմիածինը իբրև տեղի իջման Միածնի: Շատ հարասից եկած հեղեղն էլ անցաւ և Ս. Էջմիածինը դարձեալ վերաշինուեցաւ Մովսէս Սիւնեցու ձեռամբ. վերջին դարերու թշուառութեան միջոցին միակ լուսատու կենդրօնը Ս. Էջմիածինն էր, որի մասին և երգում են եկեղեցական ու աշխարհական երգիչները: Յիշեցնում ենք Պ. Ղափանեցու Ս. Էջմիածնին նուիրուած երգը, որ թէպէտ և Ղափանցուտաղերի առաջնակարգերից չէ:

բայց այնու ամենայնիւ ցոյց է տալիս ժամանակի սգին:

Մեր ժողովրդական երգիչներից երեքի միայն ճանաչում ենք, որ Ս. Էջմիածնի գովքն են երգել. 1) աշուղ Ղաղարը. «Էջմիածին խիստ գովական»... 2) Աղագիւլը. «Գիշեր ցերեկ կու քաշեմ»... և 3) Միսիկին — Բուրջին. «Էջմիածին խիստ սիրուն պայծառ տեսի»:

Առանց վարանման կարելի է պնդել, որ շատ և շատ ժողովրդական երգիչներ նուագել են Ս. Էջմիածնի մասին, սակայն դրանց երգերը անյայտութեան մէջ են մնացել: «Արարատի» աշխատակիցներից պ. Ս. Հայկունին առանձին ջանքով մի մեծ ժողովրդական վէպի մնացորդներն է ժողովել, որի հերոսն է Մոքոս կամ Մոկոս անունով մի անձն, որի սկզբնատիպարը պէտք է լուսաւորիչն եղած լինի անշուշտ: Շատ նշանաւոր է այն հանգամանքը, որ այդ վիպասանութեան մէջ լուսաւորիչն յայտնի է իբրև ճարտարապետ, որին վերագրուած են Հայաստանի բոլոր նըշանաւոր շէնքերը: Պարոն Հայկունու ժողոված վէպի մասերը թէպէտև շատ ընդարձակ են, սակայն թերի տեղերի հետքեր ևս ունին, արդեօք այդ թերիների մէջ չէ՞ և Ս. Էջմիածնի շինութիւնը: Մոկոսի վիպասանութիւնը մասամբ նման է և Սասունցի Դաւթի ուճին և թերևս մի ամբողջի մասեր են երկուսն էլ:

Այսպէս ուրեմն Ս. Էջմիածինը թէ քրնարական և թէ վիպական երգերին նիւթ է տուել, դրա պատճառն է անշուշտ նրա մեծ նշանակութիւնը:

Շատ խրատական է Ս. Էջմիածնի ճակատագիրը, փառքի մէջ ծնուած ժամանակ անյայտ է մնում, փառքի օրերում չէ յիշում, իսկ թշուառութեան և խաւարի մէջ միշտ փառաւոր է երևում և լոյս ու յոյս մատակարարում: Այս է ահա հայ տաղասացների և ողբասացների երգերի բովանդակութիւնը:

Ինչպէս Առաքել Բաղիշեցին ասել է.

- Էջմիածին, տեղ նորոգման,
- Ազգիս մերոյ թշուառական.

շատ ժամանակ նշանաբան է եղել Հայոց ազգի համար, նոյն ոգւով է նուագում և Մեսրոպ Թաղիաթեանը.

• Ի քո իջեալ տեղի
Ձաթոռ Հայրապետի
Մեր հաստատեալ ։։

Մեր նոր գրականութեան մէջ յայտնի բանաստեղծները թէպէտև առանձին երգեր չեն նուիրել Ս. Էջմիածնին, սակայն ամէնքն էլ իրենց բանաստեղծութեանց մէջ յիշատակել են Էջմիածինը, յիշենք Ալեշանն, որի «Մասիսներէի մէջ Մեծ Մասիսը պարծենում է Էջմիածնի հիմնաքարեր մատակարարած լինելու համար:

Այսպէս և Ս. Շահազիզեանը իւր «Լեռնի վշտի» մէջ Ս. Էջմիածնին է համարում այն կեդրոնը, որտեղից պիտի սկսի մեր վերակենդանութիւնը: Իսկ մեր մեծ բանաստեղծը, Գամառ Քաթիպան, վերջին շնչի հետ Ս. Էջմիածնի անունն է արտաշնչում, ցանկութիւն յայտնելով նրա հովանու տակ հանգչելու:

Մի ազգի զգացումներով ևս կարող ենք չափել նրա կենսունակութիւնը, թէ չ'նչ զգացումներ է տածում մի ազգ զէպի իւր անցեալի յիշատակներն, արտայայտում են ազգի երգիչները—բանաստեղծները, Ս. Էջմիածնի մասին մեր ազգային երգիչների արտայայտածներն առհաւատչեայ են այն մեծ գաղափարի յարատեւութեան և կենսունակութեան, որի մարմնացումն է հայ եկեղեցին և Ս. Էջմիածնի կաթողիկէն:

Շ. Զարամեան.



ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆՈՅՈՒ ՄԵՂԵԳԻՆ

ի պատիւ Ս. Գրիգոր Լուսաւորչի:

Մեր հին գրականութեան շրջանում տարակոյսներն հետզհետէ բազմանում են, հեղինակների անձերը, ժամանակը և երկերը

սկսում են կասկածանքների ենթարկուել: Բանասէրների մի մասը շուտափոյթ է իւր եզրակացութիւններով: Իսկ միւս մասը դանդաղկոտ աւանդականը գիտնականի հետ փոխանակելում:

Մատենագրութեան զտման խնդրի համար մեծ նշանակութիւն ունին բնագիրները, շատ կասկածներ, ենթադրութիւններ և եզրակացութիւններ կարող են միանգամից բարձուել ձեռագրական որևէ ընթերցանութեան օրինակով: «Արարատի» ապրիլի համարում պ. կ. կոստանեանցը ծանօթութիւններով պարզաբանեց Խորենացուց մի հատուած «Ս. Թէոփորոսի ծննդեան և սննդեան և վարուց» մասին, տպագրելով այդ հատուածը Ս. Էջմիածնի ձեռագրատան հ. 923, ճառընտրից: Այդ հատուածը արդէն իսկ տպագրուած էր «Սոփերք հայկականի» հատոր ԺԶ, մէջ, 1 սակայն առանց յիշատակելու, թէ դա Մ. Խորենացուն է: Այդ փոքրիկ ձեռագրական տարբերութիւնը մեծ նշանակութիւն ունի նախ այդ հատուածի արժէքը որոշելու համար և ապա Մովսիսի «Հայոց Պատմութեան» քննադատութեան համար:

Առիթ առնելով Ս. Էջմիածնի տօնը, ահա առաջ ենք բերում մի հին մեղեգի ս. Լուսաւորչի անունով, որ թէպէտև հրատարակուած է, բայց համարուած է իբրև Գիւտ կաթողիկոսին ձօնուած, 2 մինչդեռ մեր ձեռագրատան հ. 280 տաղարանի մէջ, այդ տաղը ս. Լուսաւորչին է յատակացրած: Մեր տաղարանի հնութիւնը (1394 թ.) բաւական մեծ երաշխաւորութիւն է վերնագրիս ստուգութեանը, եթէ այժի առաջ ունենանք նաև տաղի ներքին բովանդակութիւնը, որ աւելի ս. Լուսաւորչին է յարմարում քան թէ Գիւտին: Ահա այդ մեղեգու ճշգրիտ արտատպութիւնը Ս. Էջմիածնի համար 923, ձեռագրից:

1. Սոփերքի բնագիրը բաւական խոշոր տարբերութիւններ ունի հ. 923. ծնագրից բնագրից:
2. Տես. «Բազմավէպ» 1849. թ. 4 և «Հոսոց Նորոց» եր. 59: